Արձանագրություն N 4
<<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի ք. Աբովյանի հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանի հիմնանորոգման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02 մայիսի 2017թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Գ. Գևորգյան /գնահատող/
Կ. Բայբուրտյան/ բացող /
Ա. Գրիգորյան/ բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն որ.

- <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին և 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն համաձայն որի մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված <<Հուսալի Կամար>> ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Պարզեցված ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի ներկայացրած որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

-ներկայացված նախկինում կատարված պայմանագիրը գնահատող հանձնաժողովի կողմից չի ընդունվել որպես նմանատիպ աշխատանք, ինչպես նաև պայմանագրում բացակայել է հաշիվ-ապրանքագիրը:

Համաձայն Կարգի 51-րդ կետի՝ ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Համաձայն Կարգի 52-րդ կետի՝ սահմանված ժամկետում մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու դեպքում հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի մայիսի 4-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Ա. Ջանջուղազյան
Անդամ՝	----------	Ռ. Եղիազարյան
	----------	Գ. Գևորգյան
	----------	Կ. Բայբուրտյան
	----------	Ա. Գրիգորյան
Քարտուղար	----------	Տ. Վասիլյան